ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 15.09.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/08

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 02.06.2017թ. թիվ 03/73-3/9941-17 գրությամբ «Սեյսմշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 16.05.2017թ. թիվ 01/61-8691 գրության հիման վրա, 02.06.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Սեյսմշին» ՍՊԸ ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 16.05.2017թ. թիվ 01/61-8691 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 02.03.2017 թվականին կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/76-2» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում Երևան քաղաքի մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավոր է «Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ»:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

Վերը նշված կետի համաձայն՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնող Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության աշխատակիցների կողմից կատարված շրջայցերի արդյունքում հայտնաբերվել է, որ Կատարողը խախտել է N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների պայմանները, այն է՝ Կատարողը չի ապահովել տեխհսկիչի մշտական ներկայությունը շինարարական օբյեկտում, ինչի առնչությամբ կազմված համապատասխան արձանագրությունները և աշխատակազմի ֆինանսական վարչության պետի համապատասխան գրությունը տրամադրվել են Ընկերությանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Պայմանագրի 5.2 կետի համաձայն՝ նույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ նույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է նույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Վերոգրյալով պայմանավորված՝ Երևանի քաղաքապետարանը առաջարկել է Կատարողին Պայմանագիրը 3-րդ չափաբաժնի մասով միակողմանի լուծելու վերաբերյալ գրությունը, որը նաև հրապարակվել www.gnumner.am կայքում, ստանալու օրվա

դրությամբ վճարել Պայմանագրի 5.2 կետով հաշվարկված տույժը՝ 2290 (երկու հազար երկու հարյուր իննսուն) ՀՀ դրամի չափով:

Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկում ենք Ընկերության նկատմամբ կիրառել ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 122-րդ կետով սահմանված պահանջները»:

Խորհրդի նիստերին մասնակցել են Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Գոռ Մուրադյանը, Էդվարդ Շաքարյանը, Դավիթ Հախվերդյանը և Տիգրան Իգիթյանը:

3. <u>«Սեյսմշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սեյսմշին» ՍՊԸ-ն Խորհրդին ուղղված 22.06.2017թ. թիվ 06-17/082 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Սեյսմշին» ՍՊԸ-ի միջև 02.03.2017 թվականին կնքված N ԵՔ–ԲԸԾՁԲ–17/76-2 ծածկագրով պայմանագրի շրջանակներում Ընկերությունն իր կողմից ստանձնած պարտավորությունները իրականացրել է պատշաճ ձևով:

Սակայն, Երևանի քաղաքապետարանի կողմից 05.05.2017թ. ընդունվել է որոշում վերոնշված պայմանագիրը 3-րդ չափաբաժնի մասով միակողմանի լուծելու մասին, որի համար հիմք է հանդիսացել 06.04.2017թ. և 14.04.2017թ. Երևանի քաղաքապետարանի ֆինանսական վարչության աշխատակիցների կողմից կատարված շրջայցերի ժամանակ կազմված թիվ 02ՏՀ և 10ՏՀ արձանագրությունները:

Սակայն, արձանագրությունների կազմման ժամանակահատվածում Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի թիվ 26 մանկապարտեզում գլխավոր կապալառու «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից աշխատանքներ չեն իրականացվել, ինչի մասին կապալառու կազմակերպությունը N 17-30/45 և N 17-30/47 գրություններով տեղեկացրել է Ընկերությանը, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի կողմից կազմված թիվ 10ՏՀ արձանագրությունը չի տրամադրվել Ընկերությանը:

Փաստացի, արձանագրությունների կազմման ժամանակ վերը նշված մանկապարտեզում շինարարական աշխատանքներ չեն իրականացվել:

Թիվ 10ՏՀ արձանագրությունում կան անճշտություններ՝ մասնավորապես, ժամը 12:00-12:45 ընկած ժամանակահատվածում ստուգող հանձնաժողովը կարողացել է շրջել 3 մանկապարտեզ, որտեղ շինարարության տեխնիկական հսկողությունը իրականացնում է մեր կազմակերպությունը, սակայն կախված օբյեկտների աշխարհագրական դիրքից, նշված հատվածների երթևեկության մշտական ծանրաբեռնվածությունից, դա պարզապես անհնար էր:

Խնդրում եմ Ձեզ՝ հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, չներառել «Սեյսմշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերությունը կից ներկայացրել է գլխավոր կապալառու «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից իրեն տրամադրված՝ շինարարական աշխատանքները դադարեցնելու վերաբերյալ 03.03.2017թ. N17-03/40 և 12.03.2017թ. N17-30/47 գրությունների և Երևանի քաղաքապետարանի ֆինանսական վարչության աշխատակիցների կողմից կատարված շրջայցերի ժամանակ կազմված թիվ 02ՏՀ և 10ՏՀ արձանագրությունների պատճենները:

Խորհրդում անցկացվող նիստերին մասնակցել է Ընկերության տնօրեն Նորայր Բունիաթյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/08 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 02.06.2017թ. թիվ 03/73-3/9941-17 գրությունը և կից փաստաթղթերը, Երևանի քաղաքապետարանի 16.05.2017թ. թիվ 01/61-8691 գրությունը, Երևանի քաղաքապետարանի և «Սեյսմշին» ՍՊԸ-ի միջև 02.03.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/76-2» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր), Պատվիրատուի ֆինանսական վարչության աշխատակիցների կողմից Պայմանագրի կատարման նկատմամբ հսկողության իրականացման շրջանակներում կազմված 06.04.2017թ. թիվ 02ՏՀ և 14.04.2017թ. թիվ 10ՏՀ արձանագրությունների պատճենները, Երևանի քաղաքապետարանի կողմից 06.04.2017թ. «Սեյսմշին» ՍՊԸ-ին ուղղված թիվ 09/1482 և 05.05.2017թ. թիվ 61/621

գրությունները, «Սեյսմշին» ՍՊԸ-ի 22.06.2017թ. թիվ 06-17/082 գրությունները, «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից «Սեյսմշին» ՍՊԸ-ին տրամադրած՝ 03.03.2017թ. N17-03/40 և 12.03.2017թ. N17-30/47 գրությունները, Խորհրդի կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 31.08.2017թ. որոշումը, Պատվիրատուի հայտնած կարծիքը և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանի և «Սեյսմշին» ՍՊԸ-ի միջև 02.03.2017թ. կնքվել է «ԵՔ–ԲԸԾՁԲ–17/76-2» ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

• 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն նույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

• 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է նույն պայմանագրի N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

• 2.1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

• 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է նույն Պայմանագիրը: Կատարողի կողմից խախտումն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում N1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

Պայմանագրի N1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև Պայմանագրի ավարտը՝ շինարարության ողջ ընթացքում ապահովել տեխհսկիչի մշտական ներկայությունը օբյեկտում:

Պատվիրատուն 06.04.2017թ. թիվ 09/1482 գրությամբ դիմել է Ընկերությանը, որով, մասնավորապես, հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի ֆինանսական վարչության աշխատակիցների կողմից Պայմանագրի կատարման նկատմամբ հսկողության իրականացման շրջանակներում 06.04.2017թ. կատարած շրջայցի (Արաբկիրի N26 մանկապարտեզի հիմնանորոգում) շրջանակներում ստուգվել են Ընկերության կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը: Ստուգման ընթացքում պարզվել է, որ Ընկերոության կողմից պատշաճ կերպով չեն կատարվել պայմանագրի հավելված 1-ի 3-րդ ենթակետի 16-րդ պարբերությամբ (շինարարության ողջ ընթացքում ապահովել տեխհսկիչի մշտական ներկայությունը օբյեկտում) ամրագրված պարտականությունները, ինչպես նաև արձանագրվել է, որ Ընկերության կողմից տեխնիկական հսկողություն չի իրականացվել աշխատանքների սկսման պահից, ինչի մասին Պատվիրատուն կազմել և նույն գրությամբ Ընկերությանն է ներկայացրել թիվ 02ՏՀ արձանագրությունը առ 06.04.2017թ.:

Նույն գրությամբ Պատվիրատուն նախազգուշացրել է Ընկերությանը, որ նշված խախտումը կրկնվելու դեպքում վերջինիս նկատմամբ կկիրառվեն Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետով նախատեսված միջոցները:

Ընկերության կողմից մատուցվող ծառայության ընթացքը ստուգելու նպատակով 14.04.2017թ. Պատվիրատուի կողմից իրականացված երկրորդ շրջայցի շրջանակներում վերջինս կազմել է թիվ 10ՏՀ արձանագրությունը առ 14.04.2017թ. այն մասին, որ Արաբկիրի N26 մանկապարտեզի տանիքի հիմնանորոգման ընթացքում տեխնիկական հսկողություն չի իրականացվել:

Ընկերությանն ուղղված՝ 05.05.2017թ. թիվ 61/621 գրությամբ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններո իրականացնող Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության աշխատակիցների կողմից կատարված շրջայցերի արդյունքում

հայտնաբերվել է, որ Ընկերությունը խախտել է N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների պայմանները, այն է՝ Ընկերությունը չի ապահովել տեխհսկիչի մշտական ներկայությունը շինարարական օբյեկտում, ինչի առնչությամբ կազմված համապատասխան արձանագրությունները և աշխատակազմի ֆինանսական վարչության պետի համապատասխան գրությունը տրամադրվել են Ընկերությանը: Վերոգրյալով պայմանավորված՝ Պատվիրատուն 05.05.2017թ. ընդունել է որոշում նշված պայմանագիրը միակողմանի լուծելու մասին, որը նաև հրապարակվել է www.gnumner.am կայքում:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում կայացած նիստին Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ Պատվիրատուի ֆինանսական վարչության աշխատակիցների կողմից Պայմանագրի կատարման նկատմամբ հսկողության իրականացման շրջանակներում կազմված 02ՏՀ և 10ՏՀ արձանագրությունների կազմման ժամանակահատվածում տեխնիկական հսկողության օբյեկտների շինհրապարակներում գլխավոր կապալառու «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից աշխատանքներ չեն իրականացվել, ինչի մասին կապալառու կազմակերպությունը 03.03.2017թ. N17-03/40 և 12.03.2017թ. N17-30/47 գրություններով տեղեկացրել է Ընկերությանը և նշված գրությունների պատճենները ներկայացրեց Խորհրդին:

Սակայն, 01.08.2017թ. Խորհրդում կայացած նիստի ժամանակ «Էլդոգար» ՍՊԸ-ի տնօրեն Է. Էյլազյանը պնդեց, որ Ընկերությանն ուղղված՝ նման բովանդակությամբ գրություններ իր կողմից չեն ստորագրվել և չեն կնիքվել, թեև հայտնեց, որ գրությունների վրա դրված ստորագրությունը և կլոր կնիքը նման են իր ստորագրությանը և «Էլդոգար» ՍՊԸ-ի կնիքին:

«Էլդոգար» ՍՊԸ-ի տնօրենը հավելեց նաև, որ «Սեյսմշին» ՍՊԸ-ի կողմից Խորհրդին ներկայացված՝ 03.03.2017թ. N 17-03/40 և 12.03.2017թ. N 17-30/47 գրությունները չեն համապատասխանում իրականությանը և կեղծ են:

Խորհրդի պահանջով «Սեյսմշին» ՍՊԸ-ի տնօրեն Նորիկ Բունիաթյանը ներկայացրեց նշված գրությունների բնօրինակները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը ներկայացրել է նշված գրությունների պատճենները և բնօրինակները ՀՀ գլխավոր դատախազություն՝ համապատասխան ստուգումներ իրականացնելու և կատարված արարքը որակելու համար:

Միաժամանակ, Խորհուրդը կասեցրել է նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննությունը՝ մինչև ՀՀ գլխավոր դատախազության կողմից կատարված արարքին որակում տալը և հետագա ընթացքը վերջնականապես լուծելը:

Խորհրդի կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված հաղորդումը Ընկերության կողմից Խորհրդին ներկայացված՝ 03.03.2017թ. N 17-03/40 և 12.03.2017թ. N 17-30/47 գրությունների իսկության վերաբերյալ կասկածի մասին, ՀՀ գլխավոր դատախազության կողմից ուղարկվել են Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազություն, որտեղից և գործը փոխանցվել է ՀՀ քննչական կոմիտեի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժին:

ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժինը 04.09.2017թ. N 45/5007 գրությամբ Խորհրդին է ներկայացրել Խորհրդի կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 31.08.2017թ. որոշումը, որում, մասնավորապես, արձանագրվել է հետևյալը.

«Փաստի առթիվ 21.08.2017թ.ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի կողմից նյութերի նախապատրաստման ընթացքում «Էլդոգար» ՍՊԸ-ի տնօրեն Է. Էլյազյանը հայտնել է, որ իրենց ընկերությունը տարբեր շինարարական օբյեկտներում շինարարություն է իրականացնում, օրվա ընթացքում բազմաթիվ փստաթղթեր է ստորագրում, և քանի որ լինում է ծայրահեղ զբաղված, չի հիշում, թե կոնկրետ երբ և ինչ պայմաններում է ստորագրել, վստահաբար կարող է ասել, որ նշված փաստաթուղթը ստորագրվել է իր կողմից, և գրության վրա դրված կլոր կնիքը պատկանում է իր ընկերությանը: Քանի որ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ չի կարողացել մտաբերել, թե երբ և ինչ հանգամանքներում է ստորագրել և կնիքել նշված փաստաթղթերը, հայտնել է, որ հնարավոր է՝ դրանք կեղծ են, սակայն հետագայում վերհիշել է, որ իրենց ընկերությունը ծանուցել է «Սեյսմշին» ՍՊԸ-ին»:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերությունը «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից 03.03.2017թ. N 17-03/40 և 12.03.2017թ. N 17-30/47 գրություններով ծանուցվել է այն մասին, որ թիվ 26 մանկապարտեզում գլխավոր կապալառու «Էլդոգար» ՍՊԸ-ն գրություններում նշված համապատասխան ժամանակահատվածներում շինարարական աշխատանքներ չի իրականացնելու:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Պատվիրատուի կողմից կատարված շրջայցերի արդյունքում արձանագրությունները կազմվել են հիշյալ գրություններում գլխավոր կապալառուի կողմից նշված ժամանակահատվածներում, երբ Ընկերության կողմից տեխնիկական հսկողություն չի իրականացվել՝ պայմանավորված գլխավոր կապալառուի կողմից շինարարական աշխատանքների ժամանակավոր դադարեցմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն «Սեյսմշին» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը միակողմանի լուծելով՝ խախտել է Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետով սահմանված պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Սեյսմշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.05.2017թ. «Սեյսմշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**